

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ**

ԼՂԻՄ ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱԿԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ*

Հրանտ Աբրահամյան

Բանալի բառեր՝ իշխանություններ, Աղյոթեղան, Կոմիտե, ծեռնարկումներ, բնակչության պահանջը:

1990 թ. ամռանը Ստեփանակերտում արցախցի մի մտավորականի հետ գրուցի ժամանակ երբ խոսք բացվեց Արկադի Վոլսկու կառավարած հաստուկ կոմիտեի մասին, նա ասաց. «Ճատ մի հավատա Կրեմլի այդ գործակալին»: Նրա ասածը, ճիշտն ասած, ծանր նստվածք տվեց իմ ուղեղում: Զգիտեմ. գուցե դա է եղել պատճառը, երբ հաջորդ տարում տպագրված »Արցախյան գոյամարտ» գրքում գրել եմ. »Արցախն Աղյոթեղանի մագիլներից դուրս բերելու և ազատ զարգանալու ճանապարհին հնարավոր քայլեր կատարում էր Ա. Վոլսկու զիխավորած կոմիտեն, որի դեմ միևնույն համառութամբ պայքարում էին և՝ Աղյոթեղանում, և՝ Արցախում, և՝ Հայաստանում: Արցախում կարծում էին, թե Ա. Վոլսկին դանդաղում է, չի արագացնում Հայաստանի հետ վերամիավորման ընթացքը, Հայաստանում այն մտքին էին, թե Վոլսկին խարում է, երբեք էլ մտադիր չէր Արցախը դուրս բերելաւ Աղյոթեղանի կողմից, իսկ Աղյոթեղանում էլ տեսնում էին, որ Վոլսկու ծեռնարկած քայլերը տանում են դեպի Արցախի հնքնուրույնություն և նրան անջատում Աղյոթեղանից: Ահա թե ինչու Ա. Վոլսկու կոմիտեն երեք կողմից էլ կրում էր հարվածներ: Դրանից օգտվեց կենտրոնը և շտապեց փոխել իրադրությունը»[1]:

Արկադի Վոլսկին Լեռնային Ղարաբաղ է գործուղվել 1988 թ. հուլիսին և այնտեղ մնացել է 500 օր: Ձի կարելի ժխտել, որ նա այդ ժամանակաշրջանում որոշ քայլեր է ծեռնարկել մարզը ճգնաժամից դուրս բերելու համար: Նա առաջին անգամ Լեռնային Ղարաբաղ էր եկել նոյն թվականի ապրիլի 10-ին: Այս ժամանակ եղել է ՍՍԿԿ Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ: Լնելով Ստեփանակերտում՝ հետաքրքրվել է երկրամասի սոցիալ-տնտեսական հարցերով, այցելել ծեռնարկություններ, հանդիպել մարդկանց հետ, հետաքրքրվել նրանց ասրելապայմաններով: Նա փորձել է հասկանալ դարաբաշխան բարդույթը: Մարդանու էր, կիրթ, իրադրություններն արագ ընկալող: Նա մինչև այդ Լեռնային Ղարաբաղ եկած մուկվացի հանձնակատարներից տարբերվում էր նրանով, որ կարողացավ հասկանալ մարզի առաջ ծառացած բազմաթիվ կնճռուտ հարցերը և խոստացավ այդ ամենի մասին անձամբ տեղյակ պահել երկրի առաջին դեմքին:

1988 թ. հուլիսի 18-ի ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստից հետո հուլիսի 26-ին մամուլում հրապարակվեց ՍՍԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ընդունած որոշումը գործնականում իրագործելու միջոցառումների մասին» որոշումը, որի համաձայն՝ ԼՂԻՄ ուղարկվեց ՍՍԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ վերոհիշյալ Արկադի Վոլսկին: Նրա հիմնա-

* Հոդվածն ընդունվել է 08.12. 2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՍՍՀ պատմության ամբիոնը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Կան խնդիրը պետք է լիներ կազմակերպել և համակարգել Լեռնային Ղարաբաղի առնչությամբ ընդունված որոշումներն ու մարզը դուրս բերել ճգնաժամային վիճակից: Այդ ժամանակ նաև կազմակերպվեց ՍՍՀՀ Գերագույն սովետի Ազգությունների սովետի պատգամավորներից կազմված «հասուկ հանձնաժողով»[2]:

Լեռնային Ղարաբաղ ժամանած մոսկվացի էմիսարի առաջին գործը հանդիսացավ օգոստոսի 2-ին Ստեփիանակերտ հրավիրել Հայկումկուսի և Արդյունկուսի կենսուրումների առաջին քարտուղարներ Ս. Հարությունյանին և Ա. Վեզիրովին: Պաշտոնական հալորդագրության մեջ ասված է, որ այդ հանդիպման ժամանակ խոսվել է ինքնավար մարդում կուտակված ոչ քիչ թվով թերությունների ու դժվարությունների մասին: Դա պահանջում էր սպասիչ միջոցներ ծեռնարկել ստեղծված կացությունը շուկելու համար: Մշակվեցին ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական ու կուտուրական զարգացումն արագացնելու համար երկու հանրապետությունների հմարավորություններն առավել լրիվ օգտագործելու մի շարք կոնսորտիւմիվ առաջարկություններ: Նրանք հանդիպում ունեցան նաև Ստեփիանակերտի բնակչության հետ[3]:

1988 թ. մայիսի կետերին Շուշիի աղբեջանցիների վայրագությունների հետևանքով քաղաքի հեռացավ հայ բնակչության մեծամասնությունը, իսկ մնացած մասը ստիպված էր հեռանալ սեպտեմբերի 18-ին: Այդ օրը Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրն էր: Աղբեջանցիները լուր էին տարածել, թե հայերը պատրաստվում են ոչնչացնելու քաղաքի բոլոր աղբեջանցիներին: Վերջիններս սկսել էին մասսայաբար հեռանալ քաղաքից՝ տանելով իրենց ամբողջ ունեցվածքը: Աղդամում, Խոջալուում, Ստեփիանակերտի Կրկժան քաղամասում տեղի են ունենում հայ-աղբեջանական ընդհարություններ, որի հետևանքով կային տասնյակ վիրավորներ: Հաջորդ օրը Ստեփիանակերտում սկսվում է նստացույց: Սեպտեմբերի 20-ին արցանցի մի խումբ կոմունիստներ և պատերազմի ու աշխատանքի վետերաններ դիմում են Ա. Վոլսկուն՝ պահանջելով դարաբաղյան հիմնախնդիր «արդարացի լուծում»[4]: Սեպտեմբերի 21-ին նա կոչով դիմում է եկրամասի բնակչությամբ և առաջարկում իրավիճակը բարդանալու կապակցությամբ մարզում և Աղդամի շրջանում մտցնել հասուկ դրույթուն՝ հաստատելով պարեւտային ժամ[5]: Այսպիսով՝ Կրեմլի հանձնակատար Արկադի Վոլսկու ամենաակտիվ գործունեության ու նախաձեռնության հետևանքով 1988 թ. սեպտեմբերի 21-ից ԼՂԻՄ-ի և Աղդամի տարածքներում մտցվում է հասուկ դրույթուն: Հետո, երբ 1989-ի ապրիլի վերջին արդեն գլխավորում էր մարզում գործող Հասուկ կոմիտեն, նա փորձեց «Социалистическая индустрия» թերթին տված հարցագրույցում արդարանալ, թե իրը «պետություն ուրիշ ելք չուներ», չնայած յավ կյիներ «եթե այն ընդհանրապես չկիրարվեր»[6]: Սա արցախցիների սուացած առաջին լուրջ հարվածն էր մոսկվացի էմիսարից:

Լեռնային Ղարաբաղում ուժեղանում էին մարդկանց հետապնդումները: Առանձնապես ուշադրության կենտրոնում էր շարժման առաջնամարտիկ Արկադի Մանուչարովը: Նախ՝ Ս. Գորբաչովը, ապա՝ Ա. Վոլսկին Մանուչարովին որպես կաշառակեր և հրահանգեցին ծերրակալել նրան: Դա Բաքվի պահանջն էր:

1988 թ. նոյեմբերի 22-ին, երբ տեղի էր ունենում Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման 8-րդ նստաշրջանը, Երևանի քաղաքական հրապարակում միտինգավորների առաջ ելույթ է ունենում «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Անոն Տեր-Պետրոսյանը և հայտարարում, որ Բաքվում, Կիրովաբադում վիճակը ծանր է, մանավանդ այնտեղ ապրող հայերի համար: Այդ նոյն օրը Արկադի Վոլսկին, բարձրանալով նստաշրջանի ամբիոն, հայտարարում է, թե Բաքվում 450 հազարանոց ցույց է տեղի ունենում, որտեղ կոչեր են հնչում՝ «մահ ռուսներին», «մահ հայերին», «կեցցե խոմեյնին» և այլն: Նա նաև

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

հայտարարում է, որ Նախիջևանում գնացք է շրջվել, աղրբեջանցիները իրենց իշխանությունների նկատմամբ անվստահություն են արտահայտել, Կիրովաբադում հայերը ինքնապաշտպանվում են: Այսպիսի պայմաններում Գերագույն խորհրդի նստաշրջանը շարունակել իմաստ չունի, հնարավոր է սկսվի հայ-աղրբեջանական պատերազմ: Անհրաժեշտ է ընդհատել նստաշրջանը և մեկնել տեղերը: Այն կշրունակվի Վաղը կամ մյուս օրը, երբ վիճակը կվայունանա: Մենք այլևս չակտոր է թույլ տանք Սումգայիթի միսալ[7]:

Ա. Վոլսկու պրովակացիոն այդ ձառը արիթ հանդիսացավ ընդհատելու նստաշրջանը: Հետո՝ 1989 թ. հունիսի 22-25-ին տեղի ունեցած Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման 9-րդ նստաշրջանում ժողովրդական դեպուտատ Շ. Ղավյանը իր ելույթում կղթգործեր: «Որպես Հայաստանի խորհրդային պետության Գերագույն խորհրդի դեպուտատ, չեմ կարող նաև իմ վրդովնունքը չհայտնել Հասուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկու հանդգնության նկատմամբ, երբ ոչ ճիշտ տեղեկություններ հրամցնելով մեզ՝ ըստ էլույան ձախողեց մեր նախորդ նստաշրջանը: Միան՝ միամտություն չէր հավատալ, թե ռեգիստրում ստեղծված լարված հրադրությունը կարող է ավելի սրբեր, եթե նստաշրջանն ավարտվեր 1-2 ժամ ուշ»[8]:

1988 թ. Սպիտակի աշխարհացունց երկրաշարժ չափազանց ժամանակ թողեց հայ ժողովրդի վրա: Նախօրեին Արցախում տեղի ունեցող գործադրություն ընդհատվեց, ու արցախցի մի քանի հարյուր երիտասարդներ մեկնեցին աղետի գոտի և իրենց մերժություն ունեցան ավերիչ հետևանքները վերացնելու գործում: Ահա այդ պայմաններուն՝ 1989 թ. հունվարի 11-ին, տեղի ունեցած ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստը, քննարկելով ԼՂԻՄ-ի հարցը, հունվարի 12-ին ընդունեց հրամանագիր՝ «Աղրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում կառավարման հասուկ ծև սահմանելու մասին»: Այն մասուկում հրապարակվեց հունվարի 15-ին, որը կիրարկվեց հունվարի 20-ից:

Հարամանագրի առաջին կետն ասում է. «Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հասուկ ծև՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Աղրբեջանական ՍՍՀ-ի կազմում հնքնավար մարզի, ստատուսը:

Կազմել Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի Հասուկ կառավարման կոմիտե՝ ընկ. Ա. Ի. Վոլսկու նախագահությամբ:

Ղարաբեջնել Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի քսաներորդ գումարման ժողովրդական դեպուտատների սովետի լիազորությունները մինչև սովետի նոր կազմի ընտրությունների անցկացումը»[9]:

Ի նշ է ստացվում. ԼՂԻՄ-ում ժամանակավորապես սահմանվում է Հասուկ կառավարման կոմիտե՝ Ա. Վոլսկու նախագահությամբ, դադարեցվում են ԼՂԻՄ մարզային սովետի լիազորությունները, և մարզը թողնվում է Աղրբեջանական ՍՍՀ-ի կազմում, այսինքն՝ ինչի դեմ արցախցիները պայքարում էին:

Հարամանի երկրորդ կետի համաձայն՝ ԼՂԻՄ-ի Հասուկ կառավարման կոմիտեն (այսուհետև՝ ՀԿԿ) ենթարկվում է անմիջականորեն երկրի բարձրագույն մարմնին և «վրիկ ժապակով օժնված է հնքնավար մարզի ժողովրդական դեպուտատների սովետի ու նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ Կոմիտեի նախագահը՝ ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործադիր կոմիտեի նախագահի հրավունքներով ու պարտավորություններով»[10]: Իսկ դա նշանակում է մարզային սովետին գրկել իր հրավունքներից: Եթե մարզում մտցվեր նախագահական կառավարում, թերևս, հասկանալի կլիներ, սակայն ստեղծվում է մի մարմին, որն այն գլխից դատապարտված էր ձախողման, որովհետև պետք է կատարեր Աղրբեջանի կամքը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հրամանի երրորդ կետով՝ մարզի տարածքում գտնվող բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, մասմայութերը և կազմակերպությունները, հաշվի առնելով Աղրեցանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի կարծիքը, ենթարկվում են կոմիտեին։ Մարզի մշակութային, լրատվական, կրթության, արդյապահության և մյուս բոլոր մարմիններն «իրենց գործունեությունը իրականացնում են Կոմիտեի կամ նրանց լիազորած անձանց անմիջական դեկավարությամբ»։ Մարզի տարածքում դատախազության և դատարանների գործունեությունն իրականացվում է գործող օրենքներով։

Զորորորդ կետով սահմանվում է ՀԿ-ի իրավունքները, դադարեցվում մարզի ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործունեությունը և նշանակվում նրանց նոր ընտրություններ։ Դադարեցվում են նաև հասարակական կազմակերպությունների և ինքնագործ միավորումների գործունեությունը[11]։

Արցախահայության համար բացարձակապես անընդունելի էին այդ իրամանագրի գործեն բոլոր կետերը։ Փաստորեն՝ արցախցինների հիմնական պահանջը մերժվում է։ Այդ նշանակում է՝ պայքարը շարունակել։ Պարոն Գորբաչովի այդ իրամանից նման եզրակացության են զայիս արցախցինները։ Հրամանագրով հաստատվում է նաև Հատուկ կառավարման կոմիտեի կազմը[12]։

Հրամանագրից ստորագրվելու հաջորդ օրը՝ հունվարի 13-ին, Բարքում տեղի ունեցած Աղրեցանի կոմկուսակցության ակտիվի նիստում Աղրկոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Վ. Վեզիրովը գեկուցումով հանդես է զայիս Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման ծև մտնելու վերաբերյալ։ Նա քննանքով խոստանում է հավատարին մնալ կուսակցության սկզբունքին[13]։ Սակայն ՀԿ գործունեության ձախողման գործում Վեզիրովի ծեռնարկումները միանգամայն ակնհայտ են։

Հրամանագրից հատակ երևում է, որ Մուկու-Բաքրի համաձայնությամբ ծնված ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության այդ իրամանագրի նպատակ էր հետապնդում ԼՂԻՄ-ը կրկին նետելու Աղրեցանի ճիրանները։ «Պրավդա» թերթի հունվարի 15-ի համարում տպագրված «Խաղաղություն Ղարաբաղի հողին» հոդվածում ՀԿ նախագահ Ա. Վոլսկին խոստանում է զարգացնել Լեռնային Ղարաբաղի տնտեսական կապերը Հայաստանի, Աղրեցանի, Ուկրաինայի և մյուս հանրապետությունների հետ, զարկ տալ մարզի տնտեսությանն ու մշակույթին։ Նա պնդում էր, որ «Մարզն ինքնուրույն կուծի այն ամենը, ինչ որ նա կարող է լուծել կարտային հարցերից մինչև ինքնաֆինանսավորումը» [14]։ Այն հարցին, թե ինչով է թելադրված Հատուկ կոմիտե ստեղծելու որոշումը, նա պատասխանում է, որ ազգային շարժումը առաջին հերթին հանդես է զայիս այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ խախտվում է սոցիալական արդարությունը, երբ մի ազգի ներկայացուցիչների համար ստեղծվում են արտոնություններ, իսկ մյուսի համար խոչընդոտումներ նրա լեզվի ու ավանդույթների, կրթության պրոֆեսիոնալ առաջընթացի զարգացման համար։ Ապա նշում է, որ Աղրեցանի դեկավարությունը մարզը փակուղի էր մտցրել, Հայաստանի հետ կապերը լրիվ խզվել են։ «Երկրում, -ասում է նա, - շրջագայելիս ես ոչ մի տեղ այդպիսի բացիքող վիճակ, մարդկանց նկատմամբ քամահրանք չեմ տեսել, ինչպես Լեռնային Ղարաբաղում»։ Նա գտնում էր, որ պետք է վերանայել այն սոցիալ-տնտեսական անհարությունները, որոնք Լեռնային Ղարաբաղի բնակչության հնարավորություն չեն տալիս իրենց զգալու որպես լիարժեք հարգանք վայելող քաղաքցիներ։ Խոստանում է լայն պայքար ծավալել կաշառքի և մաֆիոզ ուժերի դեմ։ Մուկուսացի էմիսարը բարձրագույն հնչեցնում է մարզում դեկավարները ոչինչ չարեցին և սկսված շարժումը հանձնեցին ինքնակոչ դեկավարների ծեռքը, չկարողացան ազգային սկզբունքները տանել ճիշտ ուղիղով։ Եթե նրա ասածը վերաբերում էր մարզկոմի նախկին քարտուղար Բորիս Կոտրկովին, ապա նա չարաչար սիսալվում էր և իրեն դնում ժի-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ծաղելի վիճակի մեջ: Արցախից ների կողմից Բ. Կոտրկովի կաշառակեր և անազնիվ լինելու վերաբերյալ բազմաթիվ բողոքներ են ուղարկվել Մոսկվա և Բաքու ու մնացել անպատճիւնան: Հեղար Ալիկի կողմից Բ. Կոտրկովը լեռնային Ղարաբաղ է ուղարկվել մի նպատակով՝ նրա օգնությամբ մարզը բուրքացնել՝ իր բոլոր հետևանքներով: Իսկ ինչ մնում է Կոտրկովին փոխարինած Հենրիի Պողոսյանին, ապա նա ազնիվ, շիտակ, հայրենասեր ամձնավորություն էր, ժողովրդավար դեկապար: Նա կանգնած էր երկրամասի ազատագրական պայքարի ակունքներում:

Արկադի Վոլովին հայտարարում էր, որ ՀԿԿ ունի հետևյալ խնդիրները. արագացնել մարզի տնտեսության զարգացումը, վերակարութել գործարանները, կուտնտեսությունները, մշակույթի օջախները, ընդայնել բնակարանային շինարարությունը, զգալի տեղ հատկացնել մշակույթի զարգացմանը, երկու հանրապետությունների միջև ընդայնել տնտեսական և մշակույթի կապերը և այլն: Սակայն նա իրեն անկարող է զգում Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորելու ժողովրդական պահանջը կատարելու:

1989 թ. հունվարի երկրորդ կեսին վերջերին Սովորական գալով լեռնային Ղարաբաղ՝ նախ Բաքվում հանդիպում է Ա. Վեզիրովի հետ, ապա մեկնում է Երևան և հունվարի 28-ին հանդիպում Ս. Հարությունյանի հետ: Վոյ հանդիպումների ժամանակ քննարկվում են ԼՂԻՄ-ին առնչվող հարցեր և կազմվում առաջիկա ամիսների աշխատանքային պլան: Ստեփանակերտ վերադառնալուց հետո՝ Վոլովին բազմաթիվ հանդիպումներ է ունենում մարզի աշխատավորների հետ: Նա ամեն տեղ խոստանում է մարզի հիմնական հարցերը լուծել փուլ առ փուլ, աստիճանաբար: Իսկ դրա համար ամենակարևոր քայլը համարում էր գործադրույթից հրաժարվելը և աշխատանքի վերադառնալը[15]: Փետրվարի 6-ին հանդիպում ունենալով կոչկի ֆարրիկայի կուեկտիվի հետ՝ նրանց առաջարտած հարցին՝ ինչ է մուածում երկրամասի բնակչության հիմնական պահանջը կատարելու համար, թողնում է անպատճիւնան: Մինչ այդ գրեթե բոլոր տեղերում հավատացած էին, թե մուկացի հանձնակատարը մարզը դուրս կբերի Աղրբեջանից, իսկ հիմա համոզվեցին, որ նա ոչինչ էլ չի անելու: Չնայած դրան՝ կոմիտեն շարունակում էր ակտիվացնել կոռպերատիվները, որոշում է մարզում կառուցել համակցված կենտրի գործարան, վերակառուցել Ստեփանակերտի ջրամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերը, անհատական բնակարաններ կառուցելու համար հողամասեր հատկացնել և ապահովել շինամնութերով, Ստեփանակերտի կահույքի ֆարրիկան մտցնել «Հարավկահոյք» արտադրական միավորման կազմի մեջ: Քայլեր են ծեռնարկվում մարզում ստեղծելու նյութատեխնիկական մատակարարման մարմին, որը պետք է ուղիղ ենթարկվի ՍՍՀՄ Պետոնատին, գործնականում գրադի լրատվության միջոցների և մշակույթի զարգացման ուղղությամբ: Կառավարության կողմից թույլատրվեց թթի օդու թորումը և արտահանումը, որը բրեժնեկան ժամանակից արգելվում էր, մարզի գյուղատնտեսությունը ազատվեց բոժոքի արտադրությունից, օրակարգի հարց դարձավ մարզում մսի կոմբինատի կառուցումը և ոչխարների գլխաքանակի նվազեցումը և այլն: Վոյ բոլոր հարցերը բխում էին մարզի աշխատավորների կենսական շահերից:

Սակայն երկրամասի սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում էր դոփել իր տեղում: Բավական է նշել, որ միայն փետրվարի սկզբին երկրամասում կուտակվել էին 11,5 հազար փախստականներ, մարզկենտրոնում մեկ դասարանում պարապում էին 60 աշակերտ, մանկապարտեզներում 2-3 երեխայի բաժին էր ընկնում մեկ մահճակալ[16]: Անտանելի վիճակում էին գտնվում մարզային գրադարանը, երաժշտական դպրոցը և մշակույթի շատ օջախներ: Մարզի կամքի վրա շատ ծանր հետևանքներ էր թողնում գործադրությունը: Նախատեսված 35 հազար քառ. մետր բնակտարածությունից գործարկվել էր ընդամենը 2,5 հազար քառ. մետր, չեր կառուցվում ոչ մի դպրոց, հիվանդանոց, նա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

խաղաղոցական իհմնարկ, բնակարանամուտ տոնելուց գրկվել էին 1600 ընտանիք[17]: Ա. Վոլսկու կոչք փախստականները մեկմեն մարզի գյուղերը, որտեղ կային 2500 ազատ բնակարաններ իրենց տնամերծ հողերով, սակայն վերջիններս հրաժարվում են գյուղ գնալ՝ գերադասելով մնալ քաղաքում: Եվ դա այն դեպքում, եթե պետությունը պատրաստ էր նրանց տալ անսահմանափակ վարկ և օգնել ծեռք բերել անասուններ: Ա. Վոլսկին պահանջում էր «բոլոր օղակներում խոսքից գործի անցնել և մարզի քայլայված տնտեսությունն ու մարդկային խարիսխած հարաբերությունները վերականգնել»[18]:

Այս հարցերում չնայած կոմիտեն ճիշտ պահանջներ էր առաջ քաշում, սակայն մարզի բնակչությունը մնում էր թերահավատ: Նրանք համաձայն էին տանելու սոցիալ-տնտեսական բոլոր դժվարությունները, եթե հրագործվեր իրենց պահանջը՝ երկրամասը վերամիավորել մայր հայրենիքի հետ և ազատվել Աղրբեջանի գաղութային բռնատիրությունից: Ա. Վոլսկին դա շատ լավ էր հասկանում, սակայն ոչինչ անել չէր կարող, որովհետև յուրաքանչյուր քայլի նրա ճակատին խփում էր Մ. Գորբաչովի մուրզը, իսկ վերջինս պահանջում էր Լեռնային Ղարաբաղ պահել Աղրբեջանի բռունքըներում: Աղրբեջանի իշխանությունները իրենց սանձարձակ արարժներով ամեն քայլափոխի վիճեցնում էին ՀԿԿ կողմից ձեռնարկվող քայլերը: ՀԿԿ քայլերի մասին պիստեմատիկ բողոքում էին կենտրոնական իշխանություններին և պահանջում այն լուծարել: Այդ պատճառվ է հունվարի 12-ի հրամանը մնում էր անկատար: Նույնիսկ հրաժարվում են վերականգնել մարզային խորհրդները և քաղաքական ու հասարակական կազմակերպությունները, որը հիմնական խնդիրներից մեկն էր:

Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի պետական արխիվում կա թիվ 2-րդ ֆոնդ, որտեղ պահպում են մի քանի հազար էջ նյութեր, որոնց մեծամասնությունը բողոքներ են, նամակներ և տարբեր պահանջներ: Դա Հատուկ կոմիտեի ֆոնդն է: Հազիվ թե այդ բողոքների մեջ գտնվի մեկը, որը բավարարված լինի: Դա խոսում է ՀԿԿ գործելատիկ մասին: Բայց այդ ժամանակ մարզի առրբեջանական բնակչային հարաբերություն, ներառյալ Շուշի քաղաքում, շինարարությունը մեծ թափով էր առաջ գնում: Այդ առթիվ ներկայացված բազմաթիվ բողոքներ մերժվել են: Պարոն Վոլսկին երբեք հետաքրքրվել է ի, թե 1988-ի մարտին Լեռնային Ղարաբաղին հատկացված 400 մլնը որտեղ և ինչպես էին ծախսվում: Նրա քիչ տակ խոցալուն անօրեն կերպով վեր էր ածկում քաղաքի, իսկ Ստեփանակերտում հազարավոր բռնագաղթավաճներ մնում էին անօրեան: Հայկովուսի կենտրումի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, 1989 թ. մայիսի 24-ին պատասխանելով «Խորհրդային Հայաստան թերթի թղթակցի հարցին նշում է. «Թվում էր, թե ԼՂԻՄ-ի կառավարման կոմիտեի ստեղծումից հետո ռեգիոնի հրադրությունը պետք է կարգավորվեր: Իսկ ինչո՞ւ այսօր մենք հակասական ենք տեսնում», - պատասխանել է. ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեին չհաջողվեց հասնել այն պատասխանատու գործառություններին, որ նրան էին վերապահվում... Կոմիտեն լիովին չդարձավ կենտրոնական, կամ արեգիտեստական կառավարման նոր ծե: Այն, ցավոք, ժառանգեց մարզային հնքնավարության իրավական անկատարությունները»: Նա նաև նշել է, որ «ընդամենը մի քանի ամիս անց պարզ դարձավ, որ կոմիտեն ոչ միայն չունի վարչական, տնտեսական կառավարման իր կարգավիճակին համապատասխան նեխամիզմ, այլև անգամ ԼՂԻՄ-ի գարգացման համար հատկացված միջոցներն ինքնուրույն տնօրինելու իրավունք... Իսկ դրա իրականացումը հիմնականում դրված է Աղրբեջանական ԽՍՀ համապատասխան կազմակերպությունների վրա: Հատուկ կոմիտեի ստեղծումից հետո ԼՂԻՄ կառավարման ծեսը սկզբունքորեն չփոխվեցին: Հայաստանը ոչինչ չի կարողանում անել ԼՂԻՄ-ի համար, ոչ մեր մեղքով»[19]: Ա. Հարությունյանը երից ճիշտ էր:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ՀԿԿ հեղինակությունը հնարավոր էր պահպանել, եթե նրա խոստումները կատարվեր: “Կոմմոնստ” թերթի 1989 թ. մայիսի 11-ին հրապարակած հաղորդման մեջ շեշտված է, որ մարզի բնակչության մեծամասնությունը չի վստահում Հաստուկ կառավարման կոմիտեին, որովհետև կոմիտեն չի կատարում մարզի բնակչության հիմնական պահանջը: Արցախիները պահանջում են մարզը դուրս բերել Աղրբեջանից և վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Պարեկություն մոցնելով՝ ոչ մի ռեաքրում հնարավոր չէ Արցախի պրոբլեմը լուծել[20]: Այդ հարցը, օրինակ, խիստ վճռական էր դրել Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի 400 հոգու մասնակցությամբ ապրիլի 30-ին տեղի ունեցած հաստակական ընդհանուր ժողովը, որը կոմիտեից պահանջեց մարզը միավորել Հայաստանի հետ[21]: Այդ առթիվ նաև իրենց ցատումն է արտահայտել մետաքսկումքինասի ինչպես և հարյուրավոր այլ հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորները Կոլակուն և միութենական գլխավոր դատախազ Սուխարկին ուղարկած բողոք-հեռագրում: 1989 թ. մայիսի 11-ին Հայկական ԽՍՀ ԳԱ Ս. Աբեղյանի անվան գրականության հիմսիությունում աշխատակիցների տասնյակ ստորագրությամբ Հայկոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին ուղարկված նամակում նշված է, որ Արցախի կառավարման հաստուկ կոմիտե ստեղծելու առթիվ կայացված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 11-ի որոշումը փաստորեն նպաստակ էր հետապնդում «հաշվեհարդար տեսնելու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Կուսկոմիտեի և Մարզային խորհրդի հետ, որը 1988 թ. ընթացքում բազմիցս «հանդուգնե որոշումներ Աղրբեջանի կազմից Մարզը դուրս բերելու և Հայաստանին միացնելու օգտին»[22]:

Մարզի բնակչությունը, բացի ՀԿԿ-ին և վերադաս մարմիններին ուղարկած բողոքներից, հաճախակի էր դիմում գործադրումների և առաջ քաշում կոնկրետ պահանջներ: Օրինակ՝ ՀԿԿ-ին ներկայացված խնդիրներից էր մարզի բնակչության բժշկական սպասարկման բարեկավման հարցը: ՀԿԿ-ն ստիպված էր ընդունել «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության բժշկական սպասարկման վիճակի և հետագա բարեկավման միջոցառումների մասին» որոշումը, որի քննարկման ժամանակ բացահայտվել են բազմաթիվ թերություններ, և միջոցառումներ նշակվել դրանք վերացնելու համար: Նշվել է, որ 1988-ին մանկական մահացությունը աճել է 4,3 տոկոսով: Նոյն թվականին մարզի արողջապահական հիմնարկները պահանջում են սուացել 5,4 տոմնա մին, 375 կգ - յուղ, 6,4 տ. կաթ, 156 հազար ծոլ: Մարզի մի շարք հիվանդանոցներ երկար տարիներ չեն համալրվել բժշկական կադրերով[23]:

Արկադի Վոլոսկին “Социалистическая индустрия” թերթին տված վերոհիշյալ հարցագրուցում չի թաքցրել, որ ՀԿԿ հաճախ ուժնահարել է մարզի բնակչիների հրավունքները, չնայած աշխատել է «դեմոկրատական սկզբունքներով, կոլեգիալության հիման վրա»[24]: Ըստ նրա բերած տվյալների՝ մարզի բնակչության վիճակը երկար տարիներ եղել է ծանր: Որպես օրինակ նշել է, որ եթե 1987 թ. մեկ շնչին տարեկան ընկել է 7,6 կգ - մին, ապա 1988 թ. այն կազմել է 8,3 կգ: 1988-ին մեկ շնչին ընկել է ընդամենը 1,2 կգ երշկելուն, 2,6 կգ պանիր, մսի պահածո՞ն մեկ շնչի հաշվով մեկ տուփ, ծոլ՝ տարվա մեջ ընդամենը 29 հատ: Մարզը չուներ մեծածախ արևորական բազմաեր, պահեստամասեր, սարնարաններ, ապրանքաշրջանառությունը գտնվում էր ամենացածր մակարդակի վրա: Այդ ամենը, ասես, մարզի բնակչության աչքին չէր երևում և արհամարհվում էր: Ժողովրդի, ինչպես ասում են, ցավն ու դարդն ուրիշ էր: Մուլզա, Հայաստան և աշխարհի այլ երկներ ուղարկած բազում դիմումներում պահանջում էին առաջին հերթին լուծել մարզի ոչ թե սոցիալ-տնտեսական հարցը, այլ քաղաքական: Սակայն քանի որ ՀԿԿ-ն այդ ուղղությամբ ոչ մի քայլ չէր ձեռնարկում, հետևապես որոշվեց կրկին դիմել գործա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

դուքի: Այդ կապակցությամբ մայիսի 1-ին մարզում տարածվեցին մի քանի հազար թռությիներ, որտեղ կոչ է արվում դադարեցնել աշխատանքը, սկսել համբնդիանուր գործադուլ և Հասուկ կառավարման կոմիտեին ներկայացնել հստակ պահանջներ: Եվ, այսպես, 1989 թ. մայիսի 3-ից Ստեփանակերտի արդյունաբերական ծեռնարկությունները, հիմնարկները, ուսումնական հաստատությունները և մյուս մարմինները դադարեցնում են աշխատանքները: Դրա հիմնական պատճառին ավելացավ նաև Հասուկ կառավարման կոմիտեի թույլտվությամբ և համաձայնությամբ մարզի ադրբեջանական բնակավայրերում անօրեն շինարարության ժամանակումը, Հայաստանից Լեռնային Ղարաբաղ եկող ավտոմեքենաների վրա հարձակում գործելը, Շուշիից բռնագաղթված հայերի բնակարանների կողոպուտն ու զավթումը: Գործադուլը շարունակվում է շուրջ երեք ամիս: Այն կանխելու համար ՀԿԿ-ի բոլոր ջանքերն անցնում են անօգուտ: 1989 թ. մայիսի 19-ին Ն. Ոհմկովի գլխավորությամբ տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի Քաղյուրոյի հանձնաժողովի նիստը անդրադարձավ ԼՂԻՄ-ում տիրող հրավիճակին: Այստեղ ունեցած իր ելույթում Ա. Վոլսկին խոստում է շուտով կարգավորել վիճակը[25]: Ըստ հրապարակված կյութերի՝ կոմիտեն միշտ կապի մեջ էր Ադրբեջանի հշխանությունների հետ: Հենց այդ օրերին՝ 1989 թ. մայիսի 6-ին, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Պաֆայել Ղազարյանը Մուկովայի Բուտիրյան բանտում հանդիպելով իր կնոջ՝ Գրիգելդայի հետ, ասել է, որ Արկադի Վոլսկին Ղարաբաղում պարզապես թուրքանպաստ քաղաքականություն է վարում: Եվ չնայած դրան, նա համոզված է, որ Ղարաբաղի ժողովուրդը երբեք չի կոտրվի[26]:

Ստեղծված անելանելի վիճակից մարզը կարող էր դուրս բերել միայն հավաքական ուժը: 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի Ս. Գորկու անվան դրամատիկական թատրոնում տեղի է ունենում ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումար: Լեռնային Ղարաբաղի պատմության մեջ նաև նաև համագումարներ տեղի են ունեցել 1918-1920 թվականներին: Համաշխարհային պատմության մեջ դա եղակի երևույթ էր, երբ երկու տարի շարունակ մի երկրամաս կառավարվել է համագումարների միջոցով: Եվ ահա դիմելով անցյալի փորձին, լիազոր-ներկայացուցիչների համագումարը մարզի բնակչությանը կոչ է անում դուրս գալ գործադուլից: Համագումարը հայտարարում է, որ մարզում Հասուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը անկենտունակ է գոնվելու և նա, գրկվել է բնակչության վստահությունից և ի վիճակի չէ կառավարել մարզը: Ելնելով դրամից՝ «համագումարը, մինչև կառավարման սահմանադրական կարգի վերականգնումը, արձանագրում է Ազգային խորհրդի՝ մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը»[27]:

Այսիսկ արցախահայությունը հակադրվեց Կրեմլի քնահաճությանը և ստեղծեց մարզը ժամանակավոր կառավարելու ժողովրդական մարմին: Մարզի բնակչությունը, պաշտպանելով համագումարի որոշումը, դուրս է գալիս գործադուլից ու վերսկսում աշխատանքները: Համագումարից 20 օր անց Հայկումկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը սեպտեմբերի 4-ին հանրապետության ակտիվի ժողովում ունեցած ելույթում նշել է, որ ԼՂԻՄ ՀԿԿ «չի ստացել իրեն համապատասխան քաղաքական և տնտեսական կառավարման ստատուսի ֆունկցիա»: Նա պաշտպանում է ԼՂԻՄ բնակչության ընդունած արդարացի որոշումը, որը տեսնում է Լեռնային Ղարաբաղի բնակչության վերամիավորումը Հայաստանի հետ[28]:

Հասուկ կառավարման կոմիտեի նկատմամբ բացասական էին տրամադրված նաև թուրք-ազերիները: Բարուն ամեն կերպ ձգտում էր լուծարելու կոմիտեն: 1989 թ. օգոստոսի 17-ին Բաքվի մտավորականության և մայրաքաղաքի հասարակության ներկայացուցիչների կողմից հանրապետության բնակչության ուղղված բաց նամակում, լուսանքներ թափելով հայ ժողովրդի և ԼՂԻՄ բնակչության հասցեին, հայտարարվում է, որ

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հասուկ կոմիտեն ոչինչ չի կարողանում անել երկրամասի բնակչության վիճակը բարելավելու համար, որի արդյունքում ավելի է կատացել: ՀԿԿ-ին առաջարկվում է «ամենամուտ ժամանակներում վերջ տալ ԼՂԻՄ-ում սանձարձակ ահաբեկչությանը»[29]: Կատաղած Բարուն իր այդ պահանջով փորձում էր պաշտպանել մարզի տարածքում բնակող ազերիներին:

1989 թ. օգոստոսի 26-ին տեղի ունեցած Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, «անօրեն», «հակամատովովական», «հակասահմանադրական» բնորդելով ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր-մերկայացուցիչների համագումարը և նրա ընդունած որոշումները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը հայտնում է, որ ԼՂԻՄ ազգաբնակչության ներկայացուցիչների համագումարն անօրեն է ճանաչել 1989 թ. հունվարի 12-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագիրը Հասուկ կառավարման կոմիտեի ստեղծման վերաբերյալ: Նույն թվականի սեպտեմբերի 15-ին հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության ընդունած հրամանագիրն ասում է, որ հանրապետության Գերագույն խորհրդը, լսելով և քննարկելով Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակը, խստ անհանգիստ է, մանավանդ, որ մարզում »հասուկ կառավարման ծև մտցնելը չի հանգեցրել վիճակի բարեկամնը, եւ ավելի է ուժեղացրել լարվածությունը«, «խորացել և ավելի դաժան է դարձել ազգամիջյան անախորժությունները»: Ելնելով այդ ամենից՝ Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդուրը որոշում է «լուժարել Աղրբեջանական ԽՍՀ-ի ԼՂԻՄ Հասուկ կառավարման կոմիտեն և միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջ սույն հարցի վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում»[30]: Նման լայրը վերաբերնուր կարող էր ցուցաբերել միայն Աղրբեջանը:

Իրոք, զարմանալի է, ՀԿԿ ստեղծվել է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Գորբաչովի հրամանագրով, իսկ լուժարվում է Աղրբեջանական ԽՍՀ-Գերագույն խորհրդի նախագահության նախագահ է. Կաֆարովսայի սեպտեմբերի 15-ին ստորագրած հրամանով: Այստեղ տարօրինակ է մնում, թե Էլմիրա խանումը այդ ո՞ր օրենքի հիման վրա է դիմել նման հանդուզն քայլի, եթե, իհարկե, նախօրոք պայմանափորվածություն չի եղել պարոն Մ. Գորբաչովի հետ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարգում հրավիճակն ավելի է խճճվում: Նույն թվականի սեպտեմբերի վերջին ՀԿԿ ամուամ Վ. Սիլյուկը «Արցումենտներ և փակությունների թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում շեշտել է, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը շատ հեռուն է գնացել: Հանուն ճշմարտության՝ պետք է ասել, որ ԼՂԻՄ բնակչությունը սոցիալական բողոքի համար հիմք է ունեցել: Աղրբեջանի նախկին ղեկավարության կողմից, ըստ էության, իրավործվելու է մեծապետական շովիմիզմի քաղաքականություն՝ ձգտելով իրավործել Ղարաբաղի հայության ծովականություն: Մարգում ստեղծվել է մտավորականության կուլտուրական կապերի, հայկական լեզվի զարգացման, երկրամասի պատմության խորը խեղաթյուրություն: ԼՂԻՄ-ը երկարյա վարագույրով անշատվել է Հայաստանից: Անտեսվել է ղենող-ռաֆիական վիճակը: Ղարաբաղի հայության առաջ, որպես ցավագին օրինակ, միշտ էլ կանգնած է նախիջնանի ճակատագիրը: Անցյալ տարվա փետրվարից Ղարաբաղի հայության պայքարը ուղղված է եղել ոչ թե ընդդեմ աղրբեջանցիների, այլ հանրապետության ղեկավարության դեմ: Այդ նրանք են Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի մասնակիցներին կնքել «ազգայնամոլներ», «Ժայռահեղականներ», «Դաշնակներ» պիտակները և փորձել սովորական ուժային մեթոդներով ճնշել շարժումը: Վ. Սիլյուկը միանգամայն դրական է գնահատում Ղարաբաղը խորհրդային Հայաստանի հետ վերամիաբերման պահանջը: Ղարաբաղցիները պնդում են, որ իրենց հարցը մաքուր քաղաքական է, նրանք տնտեսականը մի կողմ են դնում[31]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Արկադի Վոլսկին փորձում էր Լեռնային Ղարաբաղում իր աշխատած ժամանակաշրջանը գնահատել դրական: “Իզեւետիա” թերթի թղթակցի հետ ունեցած գրույցում նշում է, որ ինքը Լեռնային Ղարաբաղում հենց սկզբից հանդիպել է մասսայական միտինգների ու ցույցերի, քաղաքական գործադրությունների, շրջակական և պատանեների: Արագին անգամ այդ ռեգիոնում ստեղծվել է ողբերգական վիճակ, երբ ազգամիջյան ընհարումների և ջարդների արդյունքում սկսել է արյուն հոսել, լեռնային անցումներով ճավել վիճաստականների հոսքը: Թղթակիցը ակնարկում է, որ ազգային անհամաձայնությունները նոր չեն, որ մեր երկրում անտեսվում են քաղաքական, ազգային հարցը և հիմնական տեղը տրվում տնտեսական հարցին: Խորհրդային տարիներին անտեսվել է փոքր ազգությունների հնքնորոշման պահանջը, այդ հարցում Ս. Գորբաչովի գնահատականները հիմնավորված չեն: Իսկ ըստ Վոլսկու՝ Լեռնային Ղարաբաղում Հաստուկ Կոմիտեի ստեղծումը պետք էր կանխեր էսկալացիան, կարգավորեր ընդհանուր վիճակը, պայմաններ ստեղծեր մի շարք հարցեր լուծելու համար: Նա փորձում էր ամեն կերպ արդարացնել կոմիտեի գործունեությունը: Ըստ նրա՝ պաշտոններից ազատվել են անազնիվ մարդիկ և նրանց տեղ առաջ քաշվել նվիրյալներ: Դա բացատում էր «ստվերային իշխանությունը»: Իսկ դա և՝ Աղրեջանում էր, և Հայաստանում և՝ Լեռնային Ղարաբաղում: Դրա համար էլ գործադրությը, շրջակակումը և կոմիտեի դեմ դժողովությունը չէր վերանում: Նա շատ լավ գիտեր, որ արցախցիները նրանց միայն պահանջում էին նպաստել վերամիավորվելու մայր հայրենիքի հետ և ազատ լինել Աղրեջանի բռնաճնշումից[32]:

Հենց նրա ոչ վճռական լինելուց էր, որ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման արտահետո 10-րդ նստաշրջանի և Արցախի Ազգային խորհրդի համատեղ նիստում ուժացած ելույթում ընդգծել է. «Մենք գիտնք, որ Հաստուկ կառավարման կոմիտեն՝ Վոլսկու գլխավորությամբ, միայն պետք է ջատի մարզի ներքին ուժերը և կատարի այն բոլոր հանձնարարությունները, որ ստանում էր Սովորայից»[33]:

1989 թ. նոյեմբերից Վոլսկու գլխավորած կոմիտեն դադարեց գոյություն ունենալուց: Աղրեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 6-ի հրամանագրով ստեղծվեց Աղրեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ի գծով հանրապետական կազմկոմիտե՝ Աղրեջուսի երկրորդ քարտուղար Վ. Պոյանիչկոյի գլխավորությամբ: Արկադի Վոլսկին Լեռնային Ղարաբաղում վերջին անգամ երևաց 1990 թ. հունվարի սկզբին: Նա Լեռնային Ղարաբաղից հեռացավ Ս. Գորբաչովի հանձնարարությունը կատարած:

Այսպիսով՝ 1989 թ. հունվարին Արկադի Վոլսկու գլխավորությամբ ստեղծված Հաստուկ կառավարման կոմիտեն լիովին ձախողվեց Ս. Գորբաչովի հանցավոր մեղքով: Այս փոխանակ ծառայեցնելու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը դրականորեն լուծելու խնդրին, ընդհակառակը, ուղղորդվեց հարցն ավելի խճճելու և երկրամասը ողբերգության առաջ կանգնեցնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրանտ Արրահամյան, Արցախյան գոյամարտ, Եր., 1991, էջ 85:
2. “Правда”, 26.07.1988.
3. «Սովետական Ղարաբաղ» թ. 180, 03.08.1988:
4. Նոյն տեղում, 01.10.1988:
5. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 87, գ. 92:
6. “Социалистическая индустрия”, 30.04.1989.

ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏՎ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2016

7. ՀԱԱ, §. 1, գ. 87, գ. 25, թ. 71: Նաև՝ «Սովետական Հայաստան» ն. 279, 26.11.1988:
8. Նույն տեղում, §. 207, գ. 32, գ. 651, թ. 13:
9. «Սովետական Հայաստան» թ. 14, 15.01.1989:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. ՀԿԿ-ի կազմը. Վ. Մ. Միշին (Համամիութենական արհմիության քարտուղար), Վ. Ա. Սիդրով (ՍՍԿԿ Կենտկոմի ենթաքանի վարիչի տեղակալ), Վ. Տ. Պիխով (ՍՍՀՄ ծանր մեքենաշինության նախարարի տեղակալ), Ս. Հ. Բաբայան (ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ), Վ. Ա. Թովմասյան (ԼՂԻՄ ժողովրդական վերահսկության կոմիտեի նախագահ):
13. “Բակինսկий рабочий”, N 13, 15.01.1989.
14. “Правда”, 15.01.1989.
15. «Սովետական Դարաբաղ», 24.03.1989:
16. Նույն տեղում, 09.02. 1989:
17. Նույն տեղում 10.02. 1989:
18. Նույն տեղում, 09.02. 1989:
19. «Խորհրդային Հայաստան», ն. 124, 24.05.1989:
20. “Коммунист”, 11. 05. 1989.
21. ԼՂԿ պետական արխիվ (ՊԱ), §. 2, գ. 1, գ. 3, թ. 13:
22. ՀԱԱ, §. 1, գ. 127, գ. 760, թ. 30:
23. «Խորհրդային Դարաբաղ», 14.04.1989:
24. “Социалистическая индустрия”, 30.04. 1989.
25. “Известия”, N 141, 21.05.1989.
26. «Հայրենիք», 1989, թ. 8, էջ 24:
27. Լեռնային Դարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության լիազոր-ներկայացուցիչների հաճագումարի նյութերը, Ստեփ., 1989, էջ 24:
28. ՀԱԱ, §. 1, գ. 87, գ. 87, թ. 5:
29. “Բակինսկий рабочий”, N 190, 17.08.1989.
30. Նույն տեղում, N 218, 19.09.1989:
31. “Аргументы и факты”, N 39, 30.09.1989.
32. “Известия”, N 342, 08.12.1989.
33. Տես Բագրատ Ովուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգորություն, Եր., 1997, էջ 130:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի ձախողումը
Հրանտ Աբրահամյան**

ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Գորբաչովի 1989 թ. հունվարի 12-ի հրամանագրով ստեղծվում է ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտե, որը պետք է մարզը կառավարեր ժամանակավոր: Կոմիտեն ղեկավարում էր ՍՍԿԿ - Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ Ա. Ի. Վոլսկին, որը Մոսկվայից Լեռնային Դարաբաղ էր գործուղվել 1988 թ. հուլիսին: Նա այնտեղ գործել է 500 օր: Սակայն այդ ժամանակաշրջանում նա չի կարողացել հասնել ցանկալի արդյունքների: Կոմիտեի գործունեությունը ամեն կերպ խոչընդոտել են Աղրբեջանի իշխանությունները: Թանի

ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՎԱՐԻ 2016

որ կոմիտեն չէր կարող դրականորեն լուծել ԼՂԻՄ բնակչության պահանջը՝ մարզը վերամիավորել մայր Հայաստանի հետ, դրա համար էլ մարզի բնակչությունը չէր պաշտպանում կոմիտեի ձեռնարկումները։ Կոլսկու գլխավորած կոմիտեի գործունեությունը բացասական են գնահատել նաև Հայաստանի իշխանությունները։ Այսպիսով՝ ձախողվում են կոմիտեի աշխատանքները, որի պատասխանատվությունն ընկնում է Ադրբեյջանի և կենտրոնական իշխանությունների վրա։

РЕЗЮМЕ

Провал Особого руководящего комитета в Автономной Области Нагорного Карабаха Грант Абрамян

Ключевые слова: власти, Азербайджан, Комитет, инициатива, требования населения

12 января 1989г. специальный руководящий комитет был основан по указу М.Горбачева, который был президентом представительства Верховного Совета СССР, комитет должен был управлять регионом временно. Комитет регулировался главой отдела машиностроения ЦК КПСС А.И Вольским, который был направлен в Нагорный Карабах в июле 1988г. Он правил там 500 дней, но за этот период не смог добиться желаемых результатов. Деятельность Комитета была пресечена властями Азербайджана, т.к. Комитет не смог решить положительно требования населения НКАО, т.е. воссоединить регион с Арменией, следовательно население не поддержало инициативы Комитета. Армянские власти также оценили (сионим слова квалифицировать) деятельность Комитета во главе с Вольским отрицательно. Соответственно деятельность Комитета не удалась, и власти Азербайджана и М. Горбачев несли за это ответственность

SUMMARY

The Failure of Special Governing Committee in Autonomous Region of Nagorno-Karabakh Hrant Abrahanyan

Keywords: authorities, Azerbaijan, Committee, initiatives, population's claim

On January 12, 1989 special governing committee was founded due to the decree of the USSR supreme Council's chairmanship president, M. Gorbachov. The Committee was to rule the region temporarily and was governed by the head of the engineering department of the Central Committee of the CPSU A. I. Volsky, who was sent on mission from Moscow to Nagorno-Karabakh in July, 1988. He ruled there 500 days but he could not achieve the desired results during this period. The Committee's activities were prevented by the Azerbaijani authorities. As the Committee could not solve ARNK populations claim positively, that is, to reintegrate the region with Mother Armenia, therefore, the population did not stand for Committee's initiatives. Armenian authorities also qualified the Committee's activity led by Volsky negatively. Thus, the Committee's activities have failed, and both Azerbaijani authorities and M. Gorbachov were responsible for it.